




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

Դ. ՏԱՐՊՅԱՆ ԺԱՅՈՒՆ ՎԵՐ

1. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ «ՀՈՒՐՐԻՆԹ»-Ը

Տասը տարին, որ կհաջորդե, վերջին շրջանն է Օրմանյանի կյանքին ու գործունեության, շրջան, որ կհասնի մինչև իր մահը, իր մեջ ամփոփելով հալածանքները, որոնց ենթակա եղավ ամբողջ շորս տարի, և այն մտքի վաստակը, զոր թուղթին հանձնեց հալածանքի այդ շորս տարիներուն Պոլսո իր առանձնարանին մեջ, և հետո Երուսաղեմ, ուր զրկած էր զինքը Ազգը, արդարացնելն հետո զայն: Այդ տասը տարին, նույնքան բեղմնավոր շրջան է Օրմանյանի համար. ան պիտի վկայե վաղվան մարդոց, թե ինչպես կրնա տոկալ մարդ հալածանքներուն, եթե ամուր է հոգին, ինչպես կրնա քեն լրնել Ազգին, եթե հայրենասիրությունը չէ խամրած իր մեջ ի հեճուկս բոլոր հարվածներուն, և ինչպես կրնա տքնիլ ու ստեղծել իր մենարանին մեջ, եթե վստահ է, թե պատմությունը իր հետ պիտի ըլլա օր մը, երբ աչքերը փակե:

Սահմանադրության հռչակումը 1908 հուլիս 10/23-ին, անակնկալ մը եղեր էր բոլորին համար: Ոչ ոք կսպասեր, որ 32 տարի իր զարշապարին տակ տրորելն հետո երկիրը, հանկարծ ազատություն կշնորհե անոր Համիդ: Համիդի այդ ժեստը ծագում կառնէր սակայն սարսափի մը, որ քանի մը ամիսն ի վեր կշարժվեր արդեն

անոր հիվանդ ուղեղը: Ոճիրներով ու կասկածներով թրծված անոր ջղագար հոգին սկսեց էր մղձավանջով տառապիլ այն օրեն ի վեր, երբ Ռեալի մեջ Ֆրանսիայի նախագահը և ցարը կհանդիպեին համաձայնելու համար հիվանդ մարդուն անդամահատության մասին: Այդ մղձավանջը ավելի տանջող կդառնա, երբ վրա կհասնեն կարգ մը խլրտումներ ալ Ռումելիի բանակին շարքերուն մեջ, և Նիազիի ու էնվերի փորձած ըմբոստությունը, որ թեև ինքնին աննշան՝ մեծագոր կայսրության մը ուժը ցնցելու համար, իր արձագանքը Յըլդըզ կհասցնեք վրդովեցուցիչ համեմատություններով: Եվ ասոր վրա ավելցնելով Համիդի մտքին մեջ սպրդած այն կասկածը, թե ահավոր պատրաստություններ ձեռնարկած են թուրք և հայ հեղափոխականները ևս իր գահը սարսնելու համար, այլևս պարզ կըլլա, թե ինչն դրդվեցավ Համիդ Սահմանադրություն շնորհելու համար երկրին:

Հորմենհետե Համիդ րազմեր էր Օսմանյան գահը, այսինքն երեսուներկու տարիներն ի վեր, աշխարհը լարած վեր իր դեմ: Իր դեմ զայրացած էր նախ քաղաքակիրթ աշխարհի խղճմտանքը ահավոր այն նախճիրներուն համար, որոնք ի գործ կդրվեին բովանդակ Օսմանյան պետության սահմաններուն մեջ, թեև եվրոպական պետություններն ուսանց համար այդ նախճիրները պատրվակներ էին:

* Շարունակված «Էջիածին» ամսագրի 1961 թվականի Մ Մ Ե-ից, Զ-ից, Է-ից, Ը-ից և Թ-ից:

լով իրենց շահերը ապահովելու Թուրքիո մեջ: Գրգռված էին իր դեմ Թուրք երիտա-սարգությունն ու մանավանդ սյայալությունը՝ ազատությունը խլված ըլլալուն համար մարդոցմե, և հեղափոխական բռնիքներ կազմած էին երկրին մեջ ու դուրսը՝ պայքարելու համար Համիդի վարչակարգին դեմ: Եվ վերջապես զարհուրանքի տակ կապրեր երկրին բովանդակ ժողովուրդը, ու ամենն ավելի բրիստոնյան, կեղեքումներուն, ճընշումներուն և քարդերուն համար, որոնց նշավակ դարձած էր:

Համիդ ուղեց լուեցնել բոլոր դժգոհները մեկեն: Խորամանկ որքան վախկոտ, նենգ որքան կասկածամիտ, անոր այնպես թվեցավ, որ ոչինչ չպիտի կորսնցնեն, եթե իր ուժին մեջ վերահաստատեն Սահմանադրությունը, զոր առկախած էր 1878-են ի վեր, վաղահաս գտնելով զայն այն ատեն: Հիմա արդեն ժամանակը հասած էր զայն կիրարկելու: Ու հետո, ի՞նչ պիտի կորցնեն, եթե բանտերուն դռները բանար, ու աքսորներեն ետ բերեր տարագրուածները. իր գահը պիտի շարսեր ադով: Մամուլի ազատությունը էս, որ Սահմանադրության հետ

պիտի շնորհվեր, վտանգավոր չէր թվեր իրեն գոնե առ այժմ: Այս զեջումներն ընելով պիտի հաջողեր ոչ միայն գահը պահել, այլև պիտի սիրաշահեր բոլորը: Հետո՛ է՛հ, որորմած էր Ալլահը...:

Արդարև, Օսմանյան Սահմանադրության վերահաստատությամբ, Եվրոպան այլևս պատրվակ պիտի չունենար միջամտելու Թուրքիո ներքին գործերուն, անընդհատ բարենորոգում պահանջելով Համիդեն. «Երիտասարդ Թուրք»-երը վար պիտի դնեին իրենց զենքերը և պիտի մտնեին իր հայրական մականին ներքև. ժողովուրդը պիտի մոռնար ամբողջ երեկը, և իր ցնծության մեջ արբշիտ, պիտի փառաբաներ իր վեհափառ տերը...:

Եվ իրոք, ան տեսավ, թե սխալած չէր: Ի՞նչ էին հապա մեծատառ փառաբանությունները, որոնցմով կշարունակեին զարգարված մնալ Թերթերը, երբոր նույնիսկ աղատ էին ա՛յլ: Ինչո՞ւ էին հապա Թափորները, որ փողոցներու մեջ կշրջեին օրնիբուն, ու կուգային մինչև պալատին դուռը, աղաղակելով խելահեղ.

— Փաղիշահըմ չո՞ք յաշա... (Շատ ապրե, արքա):

2. ՏԱՐԳԱՆ ԺԱՅՈՒՐ

Երեսուներկու տարվան դժնդակ լուծե մը հետո, երբ մարդ լույսին կբանա մեկեն աչքերը, չի կրնար իսկույն տձանել. ան գրեթե կկուրնա. 1908 հուլիս 10-ին իսկպես պահ մը կուրցավ Պոլիսը:

Շատ քիչ են եղած պահեր հայ ժողովուրդի կյանքին մեջ, երբ այսքան լեցված ըլլա ոգևորությամբ և հույսերով: Համիդի մեկ հրովարտակը, որով Օսմանյան Սահմանադրությունը կվերահաստատեր, ներում կշնորհեր բանտարկյալներուն և աքսորականներուն և ազատություն կուտար մամուլին, բավ էր եղեր, որպեսզի դարերով քաշածը մոռնա և հավատա, թե իրա՛վ եկած է ազատությունը:

Թուրքերը մեզմե բոլորովին տարբեր կերպով դիմավորեցին «Հուրրիեթ»-ը: Սահմանադրության հռչակումը հեղափոխության մը բնույթը չառավ անոնց համար: Համիդը ինքն էր, որ շնորհած կըլլար Սահմանադրությունը, և «Երիտասարդ Թուրք»-երը կզգուշանային պոռալն իրենց թափած քանքերը զայն հռչակել տալու համար: Փոխանցման շրջանի մը երեւոյթն էր «Հուրրիեթ»-ը Թուրքերուն համար, ուր երկու ոսոխ դեմ-դեմի ելած կհսկեին զիրար, մեկը՝ տակավ տիրանալու համար կացութեան, որ դիպվածով մը իր ձեռքն էր անցած, մյուսը

սը որպեսզի մտածե, թե լա՛վ ըրավ արդոք Սահմանադրություն տալով երկրին, 32 տարի զայն կղպանքի տակ պահելն հետո:

Իսկ մենք կարծեցինք, թե իրա՛վ հեղափոխություն է, և փորձեցինք ամեն բան հիմնիվայր ընել, որպեսզի երեկվրեն հետք մը չմնա: Ոգևորությունը, զոր մեր մեջ բռնկեցուցեր էր «Հուրրիեթ»-ը, մեկեն մոլեգնության հասավ, և Օրմանյան եղավ այդ մոլեգնության առաջին զոհը:

Սխալ է Օրմանյանի տապալումը ժողովրդական պոռթկումի մը վերագրել սակայն: Ամբոխը չէր որ Օրմանյանը տապալեց: Ամբոխը չկար դեռ այն օրերուն: «Հուրրիեթ»-ը, ճիշտ է, հռչակված էր արդեն երեք-չորս օրե ի վեր, բայց ոչ ոք գիտեր, թե ի՞նչ էր պատահածը: Ազատություն էր տրված ժողովուրդին. սակայն ինչո՞ւ թերթերը դեռ Համիդին գովքը կընեին, ճիշտ ինչպես կընեին տարի մը առաջ, Համիդի ծնած կամ գահը նստած օրերը տոնելու ատեն:

Օրմանյանի տեսականներուն հակառակորդ տարրեր և անոր վարած քաղաքականության տարախոհ մարդիկ ալ չէին առավելապես անոր դեմ հալածանք պատրաստողները, այլ պարզապես անոր թշնամիները, այսինքն այնպիսիները, որոնք անձնապես շահագրգռված էին անոր դեմ խաչակրության մը մեջ:

Պետք է ըսել, որ դժգոհներու բանակ մը ունեւր իր դեմ Օրմանյան: Ժողովրդական լայն խավեր կային, որոնք կմեղադրեին նախկին պատրիարքը, թե դարման չէ ճարած իրենց ցավերուն: Ուրիշներ կգտնեին, որ Օրմանյան չափազանցած է իր խոնարհամտութիւնը: Համիդի առջև և նվաստացուցած է հայ ժողովուրդը: Կային ալ, որ չէին բաժնեւր անոր գործունեութեան մեթոդը և տիրական դիրքը ժողովներու մեջ: Եվ վերջապէս մարդոց թիւ մըն ալ կար, որ կհակակրեւ անոր իր մարդկային բիծերուն համար:

Բայց այս մարդոց կողքին, որոնք անկեղծ էին առհասարակ իրենց զգացումներուն մեջ, մարդիկ ևս կային, որոնք անոր հանդեպ լեցւած էին վրեժով և ատելութեամբ: Դուլզն էր ասոնց թիւը, բայց ասոնք էին, որ կգրգռեին կիրքերը և շեշտ կուտային պայքարին:

Օրմանյան ինքն իսկ կճշտե իր դեմ հալածանքի ձեռնարկող այդ աննշան խմբակը. «Այդ կերպերու նախաձեռնութիւնները ընողներ կուսակցական գործիչներ պետք էր ըլլային, զի Օրմանյանը իրենց ծառայեցնել կրցած չլլալնուն ցավը կկրեին, մանավանդ թե իրենց հախուռն և անխորհուրդ ձեռնարկներուն հակառակ գործած ըլլալուն համար վշտացած էին, բայց անոնք տակաւին արտասահման դարձած և հրապարակ իշած չէին, և իրենց պիտակ հետևողներն ալ կանխելու և շտապելու իրավունք չունեին: Հետեւաբար հայտնի է, որ ներքին շարժումը պատրաստողներ տեղւոյն վրա եղող և այս կամ այն անձնական պատճառով Օրմանյանի օգուտ չտեսնող, կամ խաղերին քաղցնել չկրցող, և կամ իրենց անտեղի պահանջից գոհունակութիւն չստացող անձերն էին, որոնք առիթն օգտուելու և կերպով մը վրեժ լուծելու մարմաշով կգործեին»¹⁵⁷:

Հետո հականի հանձնի կհիշե բուն դերակատարները պատմական այն ցույցին, որ վերջ պիտի տար իր պատրիարքութեան. «Ցույցին զուլսը գտնվողներն էին երեք փաստաբաններ, Ավետիս Սուրենյան, Խնդիր Սիմոնյան և Արիստակէս Գասպարյան, որոնք ուրիշ գրգիռ մը չունեին, բայց եթէ Օրմանյանի գնահատված չլլալին, պաշտոններուն չկոչվելին, և Պատրիարքարանի հաշվույն դատեր հուզելու և վարելու ասպարեզ չգտնալին. իսկ առաջին երկուքը նաև Մաքսուտյան վարդապետի պաշտպանութիւնը ստանձնած էին, որոնց ամենը անձնական շահի շրջանակին անդին չէր անցնեւր»¹⁵⁸:

Օրմանյան զանց կընէ հիշել իր դեմ կազմուած առաջին ցույցին ուրիշ մեկ պարա-

զուլսը, որ Հարութիւն Մկրտիչյանն էր և որ նմազ դեր չկատարեց հարուցված աղմուկին պահուն:

Եվ որպէսզի ճիշտ տեղին ըսած ըլլանք, հիշենք, թե օրվան հերոսներն մեկը, Ավետիս Սուրենյան, Ազգային Երեսփոխանական ժողովին կողմն ազգային իրավունքներն զրկված էր տարիներ առաջ պետական շրջանակներու մեջ Ազգին շահերուն դեմ դաված ըլլալուն համար և Սահմանադրութեան շրջանին ալ պիտի չկրնար ներում ձեռք բերել, Հարութիւն Մկրտիչյան հասարակ տիրացու մըն էր դեռ, բայց հայաշինչ սարսափի տարիներուն թուրք դադտնի ոստիկանութեան թանկագին մեկ սյունը պիտի դառնար, իսկ Արիստակէս Գասպարյան և Խնդիր Սիմոնյան աննշան փաստաբաններ էին և ողորմելի կաշաղակներ միայն պիտի հանդիսանային հետադային Ազգային Երեսփոխանական ժողովին մեջ:

Առաջին այդ ցույցը տեղի ունեցավ հուլիս 16/29-ին, խառն ժողովի այն նիստին օրը, զոր Օրմանյան ինքն իսկ հրավիրած էր Սահմանադրութեան հռչակման տոնը հայ շրջանակի մեջ ալ կազմակերպելու համար հանդիսավոր շուքով:

Նիստի պահուն էր, որ վերև մատնանը ված այդ երեք-չորս հոգին, քանի մը համախոհ ևս հավաքած իրենց հետ, եկան պահանջելու «համայն Ազգին անունով», որպէսզի պատրիարքը հրաժարի իսկույն: Ժողովականները կրնային անշուշտ ավելի պաշարուլ մնալ ու շտարվիլ քանի մը անպատասխանատու մարդոց պողտուրեն: Բայց անոնք շվարեցան առաջին վայրկյանն, և իրենք զիրենք փրկելու համար պատրիարքը զոհեցին:

Օրմանյան դառնութեամբ կհիշատակե ժողովականներուն ցույց տված այդ երկշտութիւնը քանի մը ցուցարարի աղմուկին¹⁵⁹:

«Սուրհանդակ» թերթը այս առթիւ կպարծենա, թե իր ներկայացուցիչն ալ ղեկավարներն մեկն էր եղած «ժողովրդական այդ ցույցին». «Օսմանյան Սահմանադրութեան հռչակման առաջին բարերար արդունքներն մեկը եղավ Տ. Մաղաթիա Օրմանյանին հրաժարեցվիլ իր Պատրիարքական Աթոռն, բովանդակ Ազգին բաղձանաց համաձայն, որ արտահայտվեցավ երեկ առտու, Դալաթիո խորհրդարանին մեջ, ժողովրդայն ստվար բազմութեան մը կողմն, որուն զուլսը կգտնվեին մեր անձնակիր աշխատակից» ծանոթ հրապարակագիր Հարութիւն Մկրտիչյան և փաստաբան Ավետիս

¹⁵⁷ «Ազգապատում», Գ, էջ 5381:

¹⁵⁸ Անդ, էջ 5383:

¹⁵⁹ Անդ, էջ 5383—5384:

Սուրենյան»... Հետո առաջ անցավ Հարություն էֆենդիի Մկրտիչյան և նույնիսկ Օրմանյանի նկատմամբ թուրք մամուլին զգացած զայրույթը բացատրելով Օրմանյանի պաշտոնանկությունը մեծ բարեբախտություն մը համարեց Հայ Ազգին համար»¹⁶⁰:

Ընթերցողը թող թույլ տա այս տողերը գրողին ալ, որ լրացում մը ընե իր կարգին: Չորս օրե ի վեր արձակված բանտեն, ուր տարեր էին դիս վեց ամիս առաջ Կեդրոնականի գրասենդանեն հափշտակելով, ընկերներու հետ ողջագուրվելու էի եկեր այդ օրը: Մենք ալ եկեղեցվո բակն էինք խմբով, երբոր հոն եկան հավաքվիլ հանկարծ խնլ մը մարդիկ, որոնց թիվը երեք տասնյակը չէր անցներ, և սկսան պոռալ-պոռալ, թե Օրմանյանը չեն ուղեր: Այս էր ժողովրդական ցույցը», որմն ազդվելով է, որ հառն ժողովը հրաժարելու պիտի հրավիրեր իր նախագահը: Արդար ըլլալու համար պետք է ըսել, որ մենք կեդրոնականցիներս առհասարակ խանդավառվողներ չէինք եղած Օրմանյանով, բայց պժգալի էր ինչ որ կտեսնեինք այդ օրը Եկեղեցվո բակին մեջ: Ու մեր պժգանքը ավելի ևս պիտի խորանար հետո, երբ ավելի մոտեն ճանչնայինք «Ժողովրդական այս ցույցին» հերոսները:

Ու հիմա, որ ավելի քան կես դար անցած է այն տխուր օրերեն ի վեր, երբ Օրմանյանը փորձեցին գլորել Տարապան ժայռն վար, երբեմն, միտքս կբերեմ նաև անձերը, որ այդ օրերուն պահ մը ամեն ինչ էին ու կրցան ընել ինչ որ ուզեցին: Միտքս կբերեմ մեկ առ մեկ բոլոր այն մարդիկը, որ խրժբրժեցին զայն ու նախատեսին, որ հայածեցին ու դատեցին զայն, ու չեմ կրնար չկամորիլ ամոթես:

Ճիշտ է, Օրմանյանի հակառակորդներուն մեջ կային շատ մը անկեղծ մարդիկ ալ, որոնք, ինչպես ըսինք, իրավացի կամ առնիրավ, Ազգին շահերուն համապատասխան չէին գտած անոր վարած քաղաքականությունը իր պատրիարքության տասներկու տարիներուն մեջ, որոնց հաճելի չէր եղած անոր գործելու, Ազգը վարելու կերպը և տեսակետները, որոնցմով ան առաջնորդված էր, և որոնք, վերջապես, կխոշորեցնեին իրենց մտքին մեջ անոր մարդկային բիծերն ու տկարությունները:

Կային ալ, որոնք դեռ գերին էին հայկական անուշ ու դժբախտ այն ռոմանտիզմին, որ մեր դարը վարած էր մինչև այն ատեն և որոնք միամտություն ունեին դեռ հավատալու, թե տարբեր կընթանար հայ ժողո-

վուրդի ճակատագիրը, եթե հայոց պատրիարքը խրոխտ մնացած ըլլար Համիդի առջև և չնվաստացուցած իր դիրքն ու արժանապատվությունը, եթե զանց ըրած ըլլար իր այս կամ այն քայլը, որ հաշտ չէր ընթանար իր հոգևորական կոշումին հետ:

Բայց ասոնց կողքին որքան տականքներ ալ, որոնք հանկարծ հայրենասեր դարձած էին «Հուրրիեթ»-ի գինովության մեջ և հիմա «ի խաչ հան զդա» կպոռային իրենց թոքերուն բոլոր ուժովը, մարդիկ, որոնք դավաճաններ էին երեկ հայ ժողովուրդին կամ պիտի դավաճանեին վաղը, ահավոր փորձությունաց պահուն, մարդիկ, որոնց շահերուն չէր ծառայած Օրմանյան և որոնք պահը պատեհ գտած էին վրեժ լուծելու, և ձեռք-ձեռքի տված սև բիծ մը ձգեցին մեր պատմության մեջ, հայ ժողովուրդի գինով մեկ վայրկյանին շփոթեցնելով զայն:

Անոնցմե ինչ հետք մնաց մեր պատմության մեջ բացի այդ սև բիծեն. և ինչ հետք պիտի մնա այն ողորմելիներեն, որոնք թերթերու բեմին կամ պարսավատներու մեջ անեծք կթափեին մարդու մը գլխուն, որուն ամենեւնի մեծ մեղքն էր եղեր կրկես իջնել ճակատագրական պահու մը գաղանի մը դեմ մարտնչելու համար միմակը, որովհետև այդպես էր կամեցեր Ազգը:

Օրմանյան տապալեցավ, որովհետև հաշտ էր գացեր Համիդի հետ տասներկու տարի:

Եվ ո՞վ հեղնություն, «երիտասարդ-թուրքերը, որ տասնյակ տարիներ պայքար էին մղեր նույն այդ Համիդին դեմ, զայն իր գահուն վրա պահեցին, երբ իշխանության եկան: Զայն շարունակեցին ճանչնալ իբրև վեհապետ, չթերացան իրենց պաշտոնական հարգանքին մեջ, ու թույլ տվին, որ ան բանալու գա Օսմանյան Երեսփոխանական ժողովը և անգամ մը ևս խոնարհի Սահմանագրության առջև, զոր 30 տարի հայածեր էր և զոր քանի մը ամիս հետո կրկին պիտի փորձեր խեղդել:

Եվ դարձյալ ո՞վ հեղնություն, երեսփոխան թե ծերակուտական գացին, քանի մը հայեր ալ մեկտեղ, անոր սարքած խնջույքին և ըմպեցին անոր մեծարած գինին: Եվ նույն այդ խնջույքին, զոր Զապել Սալյան «Ձայն Հայրենաց»-ի մեջ համարձակեցավ «Արյունոտ խնջույքը» կոչել, գնաց բազմիլ նաև դոկտ. Նազարեթ Տաղավարյան, Սեբաստիոն երեսփոխանը, որ հազիվ տարի մը առաջ, երբ «Հուրրիեթ»-ը դեռ չէր հռչակված և ինք տակավին արտասահման էր, «համիդական» Օրմանյանի դեմ պարսավատետր մը հրա-

¹⁶⁰ «Սուրհանդակ», 17/30 հուլիս 1908:

տարակեր էր «Արծրունի» ծածկանունին տակ:

Իրենց Սայեղյան պատրիարքին դեմ դրժգոհության պատճառներ ունեին նաև հայ կաթողիկոսները, և անոնք ալ պզտիկ խլրտտումներ ունեցան տապալելու համար զայն, բայց երբեք ծայրահեղությանց չգացին: Սայեղյան շարունակեց ամուր մնալ իր դիրքին մեջ, և ոչինչ փոխեց իր շուրջը:

Օսմանյան Սահմանադրության հուլիսին ի վեր քսան օրեր սահած են,— կգրեր «Բյուզանդիոն» հուլիս 30-ին, ու դեռ հայ-

հռոմեական պատրիարքարանը բան մը չէ փոխած, ոչ ալ փոխելու տրամադիր կգտնուվի»:

Եվ իբրև լրումն, ավելցնենք, որ հույներն ալ, երբ «Հուրրիեթ»-ը եղավ, բաներ մը մոլտացին իրենց Յոակիմ պատրիարքին դեմ, որ նույնպես պաշտոն էր վարեր Համիդի օրով, բայց զայն թողուցին պաշտոնի վրա...:

Մենք տարբեր շարժեցանք մեր պատրիարքին հանդեպ: Ուղղակի Տարսուսյան ժայռն վար գլորեցինք զայն:

3. ՊԱՐՍԱՎՆԵՐՈՒ ՏԱՐԱՓԸ

1908 հուլիս 16-ի ցույցը ազդանշանն էր հարձակումներուն, որոնց պիտի սկսեր թիրախ դառնալ Պոստ նախկին պատրիարքը արդեն հրապարակով ալ, ըլլա թերթերու և թուղթիկներու միջոցով, ըլլա պարսավատետերերով, որոնց գլխավոր նյութն էր այլևս:

Ամենեւ զգվելի դերը կատարեցին թերթերը այս միջոցառումը պատրաստելու համար: Անոնք էին, որ դատապարտության վճիռ արձակեցին մարդու մը մասին, որ դեռ ամբաստանված իսկ չէր:

Ամոթ ու նողկանք միայն պիտի զգա մարդ, եթե ստիպվի օր մը աչքե անցնել 1908 հուլիսի կամ օգոստոսի հայերեն թերթերը, ոչ միայն այն թեթևամտության համար, որով կիսազրկեին անոնք այդ օրերուն և ավելի ալ հետո, այլ նաև այն ստորկական փառաբանությանց համար, զորս կշարունակեին ընծայել անոնք Մեծ Մարդասպանին, աղոթելով միշտ անոր արեւշատության համար, որովհետև ազատություն պարգևած էր իր ժողովուրդին:

Եվ այս միևնույն թերթերը, որոնք կշարունակեին դեռ խունկ ծխել Համիդին, իրենք եղան, որ հալածանքը հրահրեցին Օրմանյանի դեմ գլխավորաբար այն բանին համար, որ Համիդին հլու գտնված էր ան: Մեկ կողմն կերկրպագեին դեռ Համիդին և մյուս կողմն կհարվածեին նախկին պատրիարքը Համիդին առջև նման դիրք բռնած ըլլալուն համար:

Բացի չորս հայ օրաթերթերեն, որոնք կային Համիդի շրջանին և շարունակեցին լույս տեսնել, նոր օրերու շապիկ զգեցած անշուշտ, «Հուրրիեթ»-ի օրերուն ևս սունկի պես կբուսեին թերթերը, գրեթե բոլորն ալ ունենալու համար սակայն կարճատև կյանք մը: Խայտաբղետ անուններով որքան թերթեր, ինչպես «Միածան», «Կառափկատ», «Գա-

ղափար», «Խարազան», «Առավոտ», «Զեղոք» և այլն, լույս աշխարհ կուգային մեկ օրեն մյուսը, քանի մը օր կապրեին գրեթե անշուշտ ու հետո կկորչեին անհետ: Օրմանյանի ուխտյալ թշնամիներն էին ասոնց բոլորին ալ խմբագիրները, և միևնույն ատեն մեկ-մեկ թունդ պաշտպան նրուսաղծի «Պանամա»-ն ստեղծող այն հանձարեղ դերակատարին, որ հինգ-վեց տարի շարունակ զբաղեցուցեր էր ազգային իշխանությունները Օրմանյանի օրով և դեռ պիտի զբաղեցներ Ազգը տասնյակ մը տարի: Այդ մարդը, Ղևոնդ վարդապետ Մաքսուտյան, դիտեր ազգային զանազան դեմքեր և թերթեր իրեն կապելու զաղտնիքը:

Ամբոխը գրգռելու համար նվազ դեր չկատարեցին նաև թուղթիկները, որոնք կլրացնեին թերթերուն պակաս թողածը, «հավելյալ» և ճոխացյալ» զգվելի ծաղրանկարներով: Դեռ ուղեղիս մեջ կհնչեն ամոթալի բաղականչությունները, զորս փողոցի լակոտներ կպոռային փողոցներու մեջ իրենց թուղթիկները քշելու համար:

Պարսավատետերն ալ իրենց դերը պիտի կատարեին թերթերուն և թուղթիկներուն համահավասար: Հրապարակին վրա շրջան ընող պարսավատետերեն մեկը «Փտուլյան օջախը» խորագրով գրքույկն էր, որ արտասահման տպված Պոլիս հասած էր իսկույն: Գրքույկը իբրև հեղինակ ուներ Ա. Գրիգորյան ծածկանունին տակ թաքնված համբավավոր. Մուշեղ Սերոբյանը, Դպրեվանքի առաջին սաներեն և այն օրերուն Ադանայի առաջնորդ: Գրքույկը կպարունակեր բազմաթիվ ծաղրանկարներ ալ Արամ Անտոնյանի գրչեն ելած, մեկը մյուսն վարկաբեկիչ:

Երկրորդ պարսավատետը մը «Վեղարավոր սատանան» խորագիրը կկրեր և նույնպես լեցուն էր հայհույաններով:

Ուրիշ պարսավատետ մը, ինչպես հիշեցինք, դեկտ. նաղարեթ Տաղավարյանի գրքովին էր, արտասահման լույս տեսած, «Արծրունի» ծածկանունին տակ:

Զվարճալի միջադեպեր ալ պակաս չեղան այն մոլեգին համազարկին մեջ, որուն Թիբրախ դարձուցին Օրմանյանը, երբ արգեն տապալած էր ան:

Տիգրան Արփիարյան, որ երբեմն բավական շնորհալի գրող էր հղեր՝ «Հուրբիթ»-ի օրերուն վերջապես դառնալի առաջ, հորեն

նարպելի հանդեպ Օրմանյանի սնուցած ոխը հիշեցնելու համար գրեց «Սուրհանդակ»-ի մեջ, թե նախկին պատրիարքը հորեն նարպելի հավիտենական քունը խանգարելու համար անոր քով թաղել տվավ հորեն Աշրգյանը, որ անոր վերջին օրերը թունավորեր էր: Շիրլիի գերեզմանատունը այցելողները գիտեն, թե երկու հորեններուն միջև հսկա Սրվանձտյանցը թաղված է:

Պարսավներու այս տարափին տակ էր, որ կհասունար ամբոխը:

4. ԵՐԲ ԱՄԲՈՒԵԸ ԿԵՈՍԻ

Առաջին օրերու ցուցցերուն մեջ ամբոխը դեր չէր ունեցած:

Հետո էր, որ ամբոխ մը մարմին առավ և թերթերն էին, որ ստեղծեցին զայն ջլխտավորի իրենց պոռչտութիւն: Եվ արդարեւ, ամբոխին մեջ ալ թափանցեր էր տակավ թերթերուն սրսկած թույնը, և առասպելները, որոնք կհշտավին լրագրական լուրերու ներշնչման տակ:

Իրոք ալ, օրերի ի վեր լուրեր կըրջէին, թե Օրմանյան 30—40 հազար ռսկի շորթած է Ազգեն ու կպատրաստվի երկրին փախչիլ: Պետք էր ուրեմն միջոցներ ձեռք առնել, որպեսզի ան չկրնա խույս տալ: Ահա այս էր պատրվակը հուլիս 25/7 օգոստոսի այն պժգալի ցուցին, որ անջնջիլ արատ մը պիտի մնա Պոլսո հայ ազգային տարեգրութեանց մեջ: Բերնե-բերան լուր տալով իրարու, ցուցարարներու կարևոր թիվ մը շուտով սկսած էր հավաքվիլ Ըթրր փողոցը, Օրմանյանի տան շուրջը, նախկին պատրիարքը բռնի տունեն առնելով Պատրիարքարան տանելու և հոն բանտարկելու համար: Հիմա խոսքը դարձաւ Օրմանյանին տանը:

«Ամեն տեսակ և ամեն ազգե գործիչներ ու ցուցարարներ, հետաքրքիրներ ու պարսպորդներ տանը շուրջը եղող փողոցներ կլեցվին, և դուրս չբացվելուն վրա պատահաններ մագլցելու ալ կսկսին, աղաղակ ու ժխոր կշատնա, մինչև որ ոստիկանութեան պաշտոնյաներ կներկայանան, և ներս մտնելով կհայտարարեն, թե ոստիկանութունը չկրնալով ամբոխը ցրվել կամ դսպել և կասկածելով որոշած է զինքն ոստիկանութեան մեջ ապահովութեան ներքե առնել: Օրմանյան կպատրաստվի կառավարական հրամանին համակերպիլ և պատրաստված կառքով տուն կմեկնի, ոստիկաններ կառքին մեջ, ժողովրդական գործիչներ կառքին վրա և շուրջը, և հարչուրավոր ամբոխ մը ետեւն առնեն աղաղներով և լուտանքներով: Այս-

պես կանցնին Բերայի և Ղալաթիո մեջ փողոցներն, Գարաբէյոյի կամուրջն, և Բարձրագոյն Դռան պողոտաներն և քանի-քանի անգամներ կառքը թափալելու և կաղածները խլելու փորձեր կկրկնվին: Ոստիկանական նախարարութեան անկյունը պայքար մը կըսկսի, ոստիկաններ դեպի նախարարութուն և ժողովրդականներ դեպի Պատրիարքարան տանելու ներհակ ընդդեմ ջանքեր կընեն, մինչև վերջինները կառքին և սանձերուն կտիրանան և դեպի Գումգափու կառաջնորդեն ամբոխին և ժխորին ընկերակցութեամբ: Ոստիկաններ միասին Պատրիարքարան կմտնեն և իրենց հսկողութունը կշարունակեն: Օրմանյան բոլոր ճամբուն մեջ կառքին մեկ անկյունը լոխ կմնար, աղաղակներ կլսեր, հղածները կտեսներ, և արկածին կլքը Աստուծո կհանձնէր»¹⁶¹:

Օրմանյանը Պատրիարքարան կմտնեն այսպես, ուր սենյակ մը կառանձնանա ան, մինչև դուրսը ժխորն ու աղաղակը դեռ կշարունակվին, Այդ միջոցին է, որ քանի մը «Երիտասարդ թուրք»-եր դեպքին վայրը կհասնին, կխաղաղեցնեն ամբոխը, Օրմանյանը վերստին կառքը կդնեն և զայն կառաջնորդեն տուն՝ իրենք ալ միասին կառքը մտած: Այնտեղ կհասնին ուրիշ «Երիտասարդ թուրք»-եր ալ, ի նորո հավաքված ամբոխը կցրվեն, ոստիկանական հսկողութեան տակ կառնեն տունը, ուր իրենցմե մեկ քանին ալ կդիշերեն, ու իրենց հետ միասին քանի մը ցուցարարներ ևս, «որպեսզի արգիլեն Օրմանյանի փախուստը»:

Դժբախտութիւնն ունեցած եմ այդ օրվան ցուցն ալ տեսնելու, թեև քիչ մը ուշ, այսինքն երբ արգեն շարաշուք թափորը ճամբա կելլեր Ըթրր փողոցն, — կառք մըն էր, որուն վրա ևս մարդիկ հեծած էին, և որուն հեծակ կհետեւն ամբոխ մը, ճիշ ու լուտանք արձակելով: Տեսա, թե թափորը ինչպես անցավ հայ

¹⁶¹ «Աղագապատում», Գ, էջ 5386—5387:

կաթոլիկներու Ս. Հովհաննես Ոսկեբերան եկեղեցւոյ առջևն, Թաքսիմ փողոցը մտալ և ճամբան շարունակեց Բերայի Մեծ պողոտային, անցորդները կեցնելով ապշահար:

Մտքիս առջև է, ճիշտ այսօրվան պես, կառապան Արսենը, որ կառքը կվարեր. միտքս է իր հաղթական դիրքը կառքին վրա, սոնք ու հպարտ, ինչպես կըլլան թշնամի պետ մը գերի վարող դուցազունները: Ան այսօրվան

ցուլցեն հետո ալ դեռ երկար ատեն իր նույն այդ հաղթական դիրքը կպահեր, երբ փողոցներին կանցներ իր կառքովը, ու կսոնքար միևնույն հպարտութեամբ, երբ կփսփսային ետեկն:

— Կառապան Արսենն է...:

Կառապան Արսեններ երբեմն կհայտնվին, ավա՜ղ, իր հոգին կորսնցուցած ամբոխներուն մեջ:

5. ՊԱՏՐԻԱՐԺ ՄԸ ԴԱՏԻ ՏԱԿ

Ամբոխն դեպի ազգային իշխանութիւնները քայլ մը միայն ունի կրքի ալիքը:

1908 հուլիս 25-ի այդ ցուլցը արդարեւ ազդանշանն էր միայն պաշտոնական հաւածանքներուն, որ պիտի շուշանային:

Ազգը այն օրերուն գինովութեան մեջ էր դեռ ինքն ալ, որպեսզի կարենար տեր դառնալ կացութեան ու ամբոխին ձեռքն առնել գործերուն դեկը:

Օրմանյանը տապալելէ հետո Ազգին գլուխն էին բերել իբրեւ տեղապահ, ամենն անբասիր և ամենն հեզահամբույրը հայ եկեղեցականներուն, Դուրյան Եղիշե եպիսկոպոսը, սպասելով, որ Պոլիս հասնի հաղթական, Երուսաղեմի իր աքսորեն, Իզմիրլյան նախկին պատրիարքը:

Եվ, ավա՜ղ, ճիշտ այդ օրերուն էր, որ ամբոխն էր ձեռք առած Ազգին դեկավարութիւնը:

Տեղապահ Եղիշե Դուրյան շատ էր անգոր, որպեսզի կարենար պաշտպան կանգնել նախկին պատրիարքին և շատ ալ երկշուտ, որպեսզի կարենար ամբոխին ձեռքն առնել զայն, որպեսզի ազգային իշխանութիւնները վճռեն անոր պարագան, երբ վերջնապէս կազմվին:

Իր ուժերն վեր էր զգաստութեան կանչել կառապան Արսենները:

Ակնհայտի դառնութեամբ մըն է, որ Օրմանյան կարճաճառքի այդ դժբախտ անդորութիւնը իր երբեմնի գործակցին. «Եղիշե եպիսկոպոս Դուրյան, որ պատրիարքական տեղապահ էր ընտրված, 1890-են 1896 Դպրեմանքի մեջ Օրմանյանի գործակցի էր գտնված, և անկե ետքն ալ մինչև Զմյուռնիո առաջնորդութեան անցնելը Դպրեմանքի գործերը համերաշխ իրարօգնութեամբ վարած էին, և կենթադրվել, որ անտարբեր չկարենար մնալ Օրմանյանի արկածներուն հանդեպ. սակայն չհամարձակեցաւ ինքզինքը հայտնել, և չկրցաւ հոսանքին դիմադրել, և

եթե բացարձակապէս հակառակութեան չգործակցելով, անգործ անտարբերութեան շրջանակին ալ դուրս չելալ, և հուլիս 25-ի արկածալից օրը ոչ միայն աներևութացաւ, այլև ոչ տեղեկանալու կամ որպիսութիւն հարցնելու տարրական հոգածութիւնը արտահայտեց»¹⁶²:

Դուրյան շատ էր անկարող ամբոխ մը զսպելու համար անոր փոթորկած պահուն:

Օրմանյանի դեմ համազարկը նյութական ամբաստանութիւններով սկսել էր: Ամբոխը գրգռած էին հաւատացնելով անոր, որ Օրմանյան, Ազգին գանձը կողոպտած, արտասահման կփախչի: Զեղծումը ամենն դուրին մեղադրանքն է հանրային մարդ մը աղարտելու համար, և քիչ չեն դեպքերը, որ մարդիկ զոհ են այդ աժան ամբոխավարութեան, մինչ իսկական զեղծարարները մնացած են հաճախ անպատիժ, շարունակելով իրենց ճակտին պահել պարկեշտութեան դափնեպսակը:

Այդ տխուր դեպքն հետո, Օրմանյանի առաջին մտահոգութիւնն եղաւ հետեւաբար իր դրամական հաշիվները փոխանցել, որոնք, մանրամասն ստուգվելէ հետո երկուստեք, հանձնվեցան իսկույն ազգային նոր իշխանութեան, և մյուս կողմն պատրաստել իր պատրիարքութեան շրջանի նյութական գործառնութեանց լիակատար հաշվետվութիւնը, զոր իր կարգին պիտի ներկայացնէր Պատրիարքարան սեպտեմբեր 29-ին, լույս ընծայելով նաև առանձին գրքով մը, ցրվելու համար բոլոր շահագրգռողներուն:

Օրմանյան իր առաջին պարտքը կատարած էր: Իր հակառակորդներուն ամենն ահապոր զենքը խլած էր անոնց ձեռքէն: Այլևս ոչ ոք խոսեցաւ անկե ետք զեղծումներու մասին, բայց փոխարեն տարբեր մեղադրանքներու հսկա դեզ մը հյուսեցին իր

¹⁶² «Ազգապատում», Գ, էջ 5331:

հակառակորդները շուտով, Ազգին առջև ամբաստանելու համար նախկին պատրիարքը, բավ չհամարելով, որ իր Աթոռն տապալած են զայն և նշավակ դարձուցած անլուր ցույցի մը:

Մինչ այս մինչ այն, Ազգային Երեսփոխանական ժողովի ընտրությունները տեղի ունեցեր էին Ազգը օժտելու համար սահմանադրական մարմիններով և Ազգային ժողովը իր առաջին նիստը պիտի գումարեր հոկտեմբեր 3-ին: Օրմանյանի պարտքն էր ուրեմն անոր ներկայացնել իր հրաժարականը պատրիարքությունից:

Արդարև, հոկտեմբեր 3-ին, Ազգային ժողովի բացման առթիվ, Օրմանյան, Վերին օրինապահության լրումն, յուր հրաժարականին մասին պաշտոնական հայտարարություն ուղղեց ժողովին կարևոր բացատրություններով, և համարադրության խնդիրին ալ ակնարկելով նորին կրկնեց, թե պարտքը վարչական ժողովներուն է, այլ որովհետև ժողովի և նախագահի համերաշխությունը կարևոր է, ինքն ալ կփափագի այդ մասին աշխատիլ կամ աշխատակցիլ, եթե դիմանական ատենադրությունները և պաշտոնագիրները տրամադրության ներքև ունենա՞ն¹⁶³:

Բայց դեպքերը այլապես շարունակեցին իրենց դժբախտ ընթացքը:

1908 հոկտեմբեր 22-ին Իզմիրլյան, որ ուսանաններով վերադարձեր էր Երուսաղեմի իր աքսորեն, պատրիարք կընտրվեր: Ամբոխային տրամադրության տակ էր նաև Իզմիրլյան նախկին պատրիարքին հանդես իր վերաբերման մեջ: Ան ոչ միայն զլացավ Օրմանյանը ընդունիլ կամ անոր շնորհավորական դրերուն պատասխանել, այլև անտարբեր մնաց, երբ Ազգային ժողովը, ոտնակոխելով Սահմանադրության տրամադրությունները, կորոշեր, առանց նախաքննության բովան անցնելու, խորհրդարանական քննիչ հանձնաժողովի մը հանձնել այն 17 ամբաստանությունները, զորս իր նոյեմբեր 7-ի նիստին կներկայացնեին նախկին պատրիարքին դեմ:

Օրմանյան կրսե, թե իր բովանդակ կյանքին մեջ ոչ մեկ հարված այնքան չէ խուլված զինքը, որքան ազգային մարմիններու ցույց տված այս փոթկոտությունը նախկին

պատրիարք մը դատելու համար, մանավանդ երբ այդ տեղի կունենա բարձրաստիճան հոգևորականի մը հովանիին տակ, որ համբավված էր Սահմանադրության հանդես իր ցույց տված բժախդրությամբ: Հարվածը շատ ծանր ազդեց իրեն, ու անկողին ինկավ ուղեղատապե: Երբ քանի մը շաբաթ հետո ապաքինեցավ, նախկին պատրիարք մը չէր այլևս, այլ հասարակ ամբաստանյալ մը:

Օրմանյանի ամբաստանության հարցը առաջին օրեն կնճոտ կերպարանք մը առավ սակայն: Մեկ կողմն ճիգ մը կար անպատճառ զայն դատապարտված տեսնելու, ինչ որ կզժվարացներ օրենքը կովան ունենալու անհրաժեշտությունը. մյուս կողմն, օրենքը ինքն իսկ կնճիռ կստեղծեր: Առաջին անգամ է, որ նախկին պատրիարք մը պիտի դատեր Ազգային Սահմանադրությունը, իսկ այդ Սահմանադրության մեջ շփոթված էին դատախազ ու քննիչ, ամբաստանիչ ու դատավոր: Եվ նույն այդ Սահմանադրությունը հաշվի առած չէր, որ ամբաստանյալ մըն ալ կար: Թերևս անոր համար, որ Սահմանադրությունը խմբագրողները չէին գուշակած, թե որո՞նց պիտի վիճակի զայն կիրարկել օր մը:

Օրմանյանի դեմ առաջին ամբաստանությունը պաշտոնական սեղանի վրա բերավ Արիստակես Գասպարյան, ժողովորդական առաջին ցույցին կազմակերպիչներեն մին, որ ազգային երեսփոխան ընտրվեր էր և հիմա ազատ ասպարեզ ուներ իր բացականչությունները բանաձևելու, այլևս ամբաստանությանց կերպարանք տված անոնց:

Հաջորդեց ամբաստանությանց ամբողջ հեղեղ մը: Հրապարակ իջան տասնյակ մը ազգային երեսփոխաններ, ամեն մեկը մեղքերու ցուցակով մը: Թուրքերը աղվոր բացատրություն մը ունին. «վուրուն աբալըլա» («զարկեք աբա կրողին») կըսեն, ցուցնելու համար, թե մարդիկ սովորություն ունին բոլոր հարվածները տեղալ միայն մեկու մը վրա: Այսպես պատահեցավ Օրմանյանին ալ. նախորդ վարչաձևին բոլոր մեղքերը բեռցուցին անոր:

Այդ մեղքերուն բեռան տակ նախկին պատրիարք մը պիտի դատվեր մարդոց առջև, որոնք այդ օրերուն Ազգը կներկայացնեին:

(Շարունակելի)

163 «Ազգապատում», Գ, 5305: